ՆՈՒԲԱՐՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Սամվել Պողոսյան
պատմ. գիտ. դոկտոր
ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոն

Բանալի բառեր՝ *Նուբարյան գերդաստան, Սյունիքի մելիքներ, Նուբար, Պողոս Նուբար, Առաքել Նուբար, Մեսրոպ Նուբարյան:*

Հայ ժողովրդի պատմության մեջ զգալի հետք է թողել Նուբարյան նշանավոր գերդաստանը, որի տարբեր ներկայացուցիչներ ավելի քան 200 տարի աչքի են ընկել իրենց գործունեությամբ: Այդ տոհմին հատկապես մեծ ճանաչում են բերել Նուբար փաշան և նրա որդին՝ Պողոս Նուբար փաշան:

Նուբարյան տոհմը սերում էր Սյունիքի մելիքներից: Ինչպես հայտնի է, 1720-ական թվականներին Սյունիքում հայերի մղած ազգային-ազատագրական պայքարի տարիներին Դավիթ Բեկի նշանավոր զորավարներից էր Չավնդուրի մելիք Թորոսը (1681-1724): Վերջինս զոհվեց 1724 թ. Բարկուշատի ճակատամարտում: Չավնդուրի նոր մելիք դարձավ նրա երիտասարդ ազգականը՝ գեղադեմ, արի **Նուբարը**, որը մինչ այդ Թորոսի զորքերի սպարապետն էր[1]: Ա. Գարտաշյանը նշում է, որ նա մելիք Թորոսի որդին էր[2], սակայն դա թյուրիմացության հետևանք է, և սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ իրականում նրանք ազգականներ էին:

Ապստամբության վախճանից հետո Նուբարը հեռացավ հայրենի Շիկահող գյուղից և 1732 թ. հաստատվեց Զմյուռնիայում: Նա այնտեղ ամուսնացել և ունեցել է երեք որդի՝ **Դավիթ, Սողոմոն, Պաղտասար,** որոնք Զմյուռնիայում վաճառականությամբ էին զբաղվում: Եղբայրներից Սողոմոնն ունեցել է չորս զավակ՝ **Նուբար, Մկրտիչ, Առաքել, Դավիթ**, որոնք շարունակում էին զբաղվել վաճառականությամբ:

Նուբարի թոռը՝ **Մեսրոպ Հովհաննեսի Նուբարյանը** (Զմյուռնիա, 28.11.1842 - 04.12.1929, Մարսել) իր տոհմին մեծ հեղինակություն բերեց, որպես թարգմանիչ, բառարանագիր, բանասեր: Նա սովորել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում, վաղ տարիքից հմտացել ֆրանսերենի մեջ: Դեռևս

[1] Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևան, 1992, էջ 37:
[2] Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, հ. Բ, Վենետիկ-Ս.Ղազար, 1986, էջ196:

աշակերտական տարիներից թարգմանություններ է կատարել Շատոբրիանից և Ռասինից: Գր. Մսերյանի հետ խմբագրել է «Մեդեորա» պարբերականը, որն առաջադիմական գաղափարների պատճառով 1882 թ. փակվել է սուլթանական կառավարության կողմից: Հրատարակել է «Բառարան ֆրանսերեն հայ-աշխարհիկ» (Պոլիս, 1892), իսկ 1911 թ.՝ դրա համառոտը՝ «Առձեռնը»: Թարգմանել և հրատարակել է Վ. Հյուգոյի «Փարիզի աստվածամոր տաճարը» (Զմյուռնիա, 1868, 1871), Մոլիերի կատակերգությունները (հ. 1-2, Զմիւռնիա, 1905), Լաֆոնտենի առակները, Ֆ. Նանսենի «Դեպի բևեռը», Գյոթեի «Ֆաուստի» առաջին մասը՝ ազատ ոճով (Զմիւռնիա, 1910), Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետը»: Մամուլում տպագրել է Բենջամեն Կոստանի «Ադոլֆ» վեպը, Բուալոյի «Գրակալը» ևն: 1922 թ. Զմյուռնիայի աղետից հետո հեռացել է Ֆրանսիա, հաստատվել Մարսելում: Երկար տարիներ աշխատակցել է արևմտահայ մամուլին («Արեւելեան մամուլ», «Բիւզանդիոն», «Շանթ», «Ծաղիկ», «Կոչնակ» ևն): Ստորագրել է Մ. Նուպար, Մեսրոպ Նուպար[1]: Հետմահու հրատարակվել է նրա հուշագրությունը «Սգավոր տարիներ» (Փարիզ, 1939):

Մկրտիչ Նուբարյանի ժառանգներին էր վիճակված նոր փառք բերել այդ տոհմին: Նա ամուսնացավ Եգիպտոսի արտաքին գործերի և առևտրի նախարար Պողոս բեյ Յուսուֆյանի (1768-1844) քրոջ՝ Մարիամ-Վարդուհի Յուսուֆյանի (Գյուլ հանըմ) հետ և ունեցավ չորս որդի՝ Նուբար փաշան, Առաքել բեյը, Կարապետ (Շարլո) բեյը, Սողոմոն չելեպին և երկու դուստր՝ Հռիփսիմեն և Մարթան: Հռիփսիմեն 1840 թ. ամուսնացել է կոմս Ժ. դե Բոննալի հետ, իսկ Մարթան՝ Դանիել Մարկոսյանի (Մարկոսոֆ) հետ և ունեցել երկու որդի՝ Շարլ-Կարապետը և ճարտարագետ Մկրտիչ բեյ Մարկոսոֆը:

Մկրտիչ Նուբարյանը Եգիպտոսի փոխարքա (1805-1849) Մուհամմեդ Ալիի առևտրական գործերի ներկայացուցիչն էր Զմյուռնիայում և Փարիզում: 1842 թ. նա Մարսելում հանկարծամահ եղավ և աճյունն ամփոփվեց Զմյուռնիայի Ս. Ստեփանոսի գերեզմանատանը՝ Նուբարյանների տոհմական դամբարանում:

Կարապետ բեյ Նուբարյանը 1830 թ. իր մորեղբոր՝ Պողոս բեյ Յուսուֆյանի հրավերով մեկնեց Եգիպտոս և ստանձնեց Մուհամմեդ Ալիի թարգմանի և քարտուղարի պաշտոնը: Սակայն 1839 թ. նա մահացավ, իսկ աճյունը հողին հանձնեցին Զմյուռնիայի Նուբարյան դամբարանում:

Սողոմոն չելեպի Նուբարյանը բարձր առաջադիմությամբ ավարտել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը, ապա մեկնել Եգիպտոս և Մուհամմեդ

[1] «Սիոն», Երուսաղէմ, 1930, թիւ 1, էջ 31-32:

Ալիից ստացել «Սաղ-Գօլ-Աղասը պատիւին պաշտօնը»[1]: Սակայն Սողոմոնը նույնպես վախճանվեց երիտասարդ տարիքում:

Առաքել բեյին և, հատկապես, Նուբար փաշային էր վիճակված ճանաչման նոր աստիճանի բարձրացնել իրենց գերդաստանի հեղինակությունն ու անունը: Նրանք նույնպես, օգտվելով մորեղբոր հովանավորությունից, բնակություն հաստատեցին Եգիպտոսում և դեռևս երիտասարդ տարիքում բարձր դիրքի հասան այնտեղ:

Առաքել բեյ Նուբարը (1826-1858) Փարիզում բարձրագույն կրթություն ստանալուց հետո, 1846 թ. վերադարձել է Զմյուռնիա, իսկ 1847 թ. տեղափոխվել Եգիպտոս: Նա դարձավ Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիի որդու՝ իշխան Իբրահիմի, թարգմանն ու քարտուղարը: Խելքի և անձնական բարձր հատկանիշների շնորհիվ 24 տարեկանում Առաքել Նուբարը նշանակվեց Եգիպտոսի արտաքին գործերի և առևտրի նախարար (1850-1853), ապա՝ Բեռլինում Եգիպտոսի ներկայացուցիչ (1853-1856)[2], իսկ 1856 թ.՝ Սուդանի ընդհանուր կառավարիչ: Մինչ այդ մահմեդականներով բնակեցված այդ երկրամասը չէր կառավարվել քրիստոնեայի կողմից: Մի շարք ցեղեր ապստամբություն բարձրացրին, քանի որ անհանդուրժելի էին համարում քրիստոնեայի կողմից մահմեդականներին կառավարելը: Տեղեկանալով այդ մասին, Առաքելը միայնակ ու անզեն մեկնեց ապստամբների ճամբարը և հարցրեց, թե ինչու են ապստամբել, եթե միայն իր քրիստոնեա լինելու համար է, ապա կարող են իրեն սպանել, քանի որ անցանկալի էր համարում, որ իր անձի պատճառով բազմաթիվ մարդկանց արյուն հեղվեր, եթե այլ խնդիր կար, ապա ինքը կփորձի լուծել: Այդ դիվանագիտական քայլը պսակվեց հաջողությամբ: Ապստամբների առաջնորդը, հիացած Առաքելի համարձակությունից ու ազնվությունից, համբուրեց նրա ձեռքը և իր հպատակությունը հայտնեց, որից հետո Առաքելը 14 ամիս խաղաղությամբ իշխեց իրեն վստահված նահանգում և վայելում էր հպատակների սերն ու հարգանքը: Իր անկաշառ ուղղամտության համար նրան Սուդանում տվեցին «Արդարասեր» մականունը, որը պաշտոնապես կցվեց իր անվանը, և Սուդանի կառավարիչների ցուցակում նա

[1] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 203:

[2] Պէրդրան Է., Նուպար փաշա (1825-1899): Նիշք եւ տպաւորութիւնք, թարգմ. Մեսրոպ Նուպարեան, Կ.Պոլիս, 1910, էջ 43-47:

հիշատակվում է Առաքել Նուբար Արդարասեր անունով[1]: Սակայն երկար չկառավարեց, քանի որ նա ևս մահացավ երիտասարդ տարիքում:

Նուբար փաշա Նուբարյանին (Զմյուռնիա, 1825-1899, Փարիզ) վիճակված էր դառնալ Եգիպտոսի ամենանշանավոր պետական-քաղաքական գործիչներից մեկը: Զմյուռնիայի հայկական դպրոցում ստացել է միջնակարգ կրթություն, ապա երկու տարի ուսանել է Ժնևում և Սորեզում: 1842 թ. դեռևս 17-ամյա պատանի Նուբարը, մորեղբոր՝ Պողոս բեյ Յուսուֆյանի հրավերով, մեկնեց Եգիպտոս՝ քարտուղարի պաշտոնով: Նուբարն օժտված էր մեծ ունակություններով, պերճախոսությամբ, դիվանագիտական բարձր հմտություններով, պետական գործչին անհրաժեշտ գրեթե բոլոր ունակություններով, որոնք ըստ արժանվույն գնահատվեցին Եգիպտոսի իշխողների կողմից:

1844 թ. Նուբարը նշանակվեց Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալիի քարտուղար-թարգմանիչը և թագաժառանգի ուղեկից-խորհրդատու[2]: 1846 թ. եգիպտական պատվիրակության կազմում մեկնեց Փարիզ: Ֆրանսիայի կայսր Լուի Ֆիլիպը, հիանալով հայ երիտասարդի մտավոր բարձր ունակություններով, նրան անձամբ պարգևատրեց Պատվո լեգեոնի խաչով[3]:

1849 թ. Նուբարը ստացավ բեյի տիտղոս, նշանակվեց փոխարքայի առաջին քարտուղար և միաժամանակ Ալեքսանդրիայի առողջապահության վարչության տնօրեն[4]: 1850 թ. ստացավ առաջին լուրջ դիվանագիտական հանձնարարությունը: Մեկնեց Լոնդոն և բրիտանական կառավարության մոտ կարողացավ հակահարված տալ թուրքական կառավարության նկրտումներին, որոնք առաջ էին եկել Մուհամմեդ Ալիի մահից հետո: Իր դիվանագիտական տաղանդի շնորհիվ 25-ամյա երիտասարդը որոշ արտոնություններ ապահովեց Եգիպտոսի փոխարքայի համար[5]:

1850 թ. սեպտեմբերի 3-ին Կ. Պոլսում Նուբար փաշան ամուսնացավ Գևորգ բեյ Երամյանի դստեր՝ Ֆուլիկի (1831-1906) հետ:[6] Նրանց առաջնեկը եղավ Պողոս Նուբարը, որը նրանց միակ որդին էր: Նուբարն ունեցավ նաև երկու դուստր՝ Մարիամը և Վարդուհին:

---

[1] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 215-216:
[2] Պէրդրան Է., նշվ. աշխ., էջ 29-32:
[3] Նույն տեղում, էջ 34-35:
[4] Զարդարեան Վ., Յիշատակարան, (1512-1912), հ. Բ, Կ.Պոլիս, 1911, էջ 279:
[5] Պէրդրան Է., նշվ. աշխ., էջ 36:
[6] Զարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), հ. Գ, Գահիրէ, 1934, էջ 47-50:

Նուբարը եղել է Վիեննայում Եգիպտոսի ներկայացուցիչ (1853-1856)[1], Եգիպտոսի ընդհանուր դատախազության նախագահ (1856-1858), Երկաթուղիների վարչության տնօրեն (1858-1859), իսկ 1859-1862 թթ. տարբեր դիվանագիտական հանձնարարություններով մեկնել է Եվրոպա[2]:

1863 թ. Նուբարին շնորհվեց ֆերիք և փաշա տիտղոսները: Լուրջ ներդրում է ունեցել Սուեզի ջրանցքի կառուցման գործում: 1865 թ. Նուբարը նշանակվեց Հանրօգուտ շինությունների նախարար և Երկաթուղիների վարչության տնօրեն, իսկ 1866 թ.՝ Արտաքին գործերի նախարար[3]: Վերջին պաշտոնը նա վարեց մի քանի անգամ (1866-1874, 1875-1876, 1878-1879, 1884-1888): Ցանկացած պաշտոնում, կազմակերպական բարձր որակների շնորհիվ, Նուբարն իրեն դրսևորում էր լավագույնս: Դա էր այն գլխավոր պատճառներից մեկը, որի շնորհիվ նա անընդմեջ բարձրանում էր, չնայած, ինչպես վկայում են ժամանակակիցները, չուներ քծնելու և շողոքորթելու սովորություն, որը հատուկ էր աշխարհի բոլոր արքունիքներին, հատկապես Արևելքի երկրներին:

Նուբարի վարած արդյունավետ բանակցությունների շնորհիվ, օսմանյան սուլթան Աբդուլ Ազիզը 1866 թ. և 1867 թ. ստորագրեց երկու հրովարտակներ, որոնցով հիմք դրվեց Եգիպտոսի բացարձակ ինքնավարությանը, իսկ 1868 թ. սուլթանը հրամանագիր ստորագրեց, որով Եգիպտոսի փոխարքան անվանվում էր խդիվ՝ ստանալով իշխանությունը ժառանգաբար փոխանցելու իրավունք[4]:

Նուբարը չափազանց մեծ ջանքեր գործադրեց Եգիպտոսում դատարանների և արդարադատության համակարգի բարեփոխում իրականացնելու համար: Ինանմյա (1867-1876) պայքարից հետո Նուբարը ստեղծեց Եգիպտոսի քաղաքացիական, առևտրական, քրեական օրենսգրքերը, իսկ հյուպատոսական դատարանները նրա ջանքերով փոխարինվեցին միջազգային կամ խառը դատարաններով՝ կազմված եգիպտացիներից և եվրոպացիներից, որոնք զգալիորեն սահմանափակեցին եվրոպացիների իրավունքները Եգիպտոսում: Մինչ այդ օտարերկրացիների համար գործում էին հյուպատոսական դատարաններ, ուր ոտնահարվում էին եգիպտացիների շահերը[5]:

---

[1] Պէրդրան Է., նշվ. աշխ., էջ 43-47:
[2] Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Բ, էջ 281:
[3] Նույն տեղում, էջ 283:
[4] Պէրդրան Է., նշվ. աշխ., էջ 76-77:
[5] Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978, էջ 85-86:

Նուբարը մեծ ուշադրություն էր դարձնում Եգիպտոսում ռոգման համակարգը զարգացնելուն և հսկայական առաջընթաց արձանագրեց նաև այս հարցում: Իզուր չէր, որ եգիպտացի գյուղացիները՝ ֆելլահները, Նուբարին կոչում էին «ֆելլահների հայր»:

1876 թ. նա ժամանակավորապես հեռացավ Եվրոպա, քանի որ ընդհարվել էր խդիվ Իսմայիլի հետ, որը զբաղված էր պետական ունեցվածքը վատնելով և երկիրը նորանոր պարտքերի մեջ ներքաշելով:

1877 թ. Բուլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը տերություններին առաջարկեց Բուլղարիայի կառավարիչ նշանակել Նուբարին, որը դրական արձագանք ունեցավ, սակայն չիրականացավ ռուս-թուրքական պատերազմի սկսվելու հետևանքով[1]: Այդ փաստը վկայում էր Նուբար փաշայի միջազգային բարձր վարկանիշի մասին: Այդ պաշտոնում Նուբարին նշանակելու հարցը քննարկվեց նաև Բեռլինի կոնֆերանսից հետո: Անգլիայի վարչապետ Բիքոնսֆիլդը ներկայացրեց Նուբարի անունը: Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները հակված էին Նուբարին տեսնելու Բուլղարիայի իշխանի պաշտոնում, սակայն Թուրքիայի ընդդիմության հետևանքով նրա թեկնածությունը հանվեց[2]:

Անգլիայի և Ֆրանսիայի պահանջով, 1878 թ. օգոստոսի 28-ին Իսմայիլը Եգիպտոսում հաստատեց Նախարարների խորհուրդ՝ կառավարություն, որի նախագահ նշանակեց Նուբարին: Այդ կառավարությունը հայտնի է «Եվրոպական կաբինետ» անունով, քանի որ բոլոր նախարարները եվրոպացի էին: 1879 թ. Նուբարը կրկին ընդհարվեց Իսմայիլի հետ և հեռացավ երկրից: Հետագայում ևս երկու անգամ Նուբարը ստանձնեց Եգիպտոսի վարչապետի պաշտոնը (1884-1888, 1894-1895): Այդ պաշտոնում Նուբարն ամբողջ եռանդով փորձում էր պաշտպանել Եգիպտոսի շահերը և հակահարված տալ օտարերկրյա գաղութարարներին:

Չնայած նա գործում էր Հայաստանից հեռու, երբևէ չէր եղել պատմական հայրենիքում, սակայն երբեք չմոռացավ իր հայկական ինքնության մասին: Նուբարը նշում էր. «Կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտը իմ առաջ այդ գործը հանեց, հրապուրվեցա անկից և կապվեցա: Բայց օտար երկրի մեջ այդ

[1] Զարդարեան Վ., Նուպարեան գերդաստան, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիւ 6, էջ 90-91:

[2] Նուպար փաշա ու եւրոպական մամուլը, «Անահիտ», Փարիզ, 1899, թիւ 4, էջ 144:

գործունեությունս երբեք ինձի չմոռցուց, որ հայ մըն եմ»[1]: Նա միշտ հպարտանում էր, որ հայ էր և ամենուրեք փորձում էր բարձրացնել իր ժողովրդի անունը: 1860-ական թթ. ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան Նուբարի պատվերով ֆրանսերեն թարգմանեց և հրատարակեց հայ մատենագիրների գործերը, ֆրանսերենով հրատարակեց Հայոց պատմությունը[2]: Նուբարի հանձնարարությամբ Վենետիկի Մխիթարյանները ֆրանսերեն թարգմանեցին Ղ. Ալիշանի «Սիսուան» աշխատությունը[3]: Նուբարը 1866 թ. Կ. Պոլսի մոտ գտնվող Խասգյուղում հիմնեց Շահնազարյան-Նուբարյան վարժարանը[4]:

Իր ժողովրդին օգնելու ամենապատեհ հնարավորությունը ստեղծվեց 1878 թ., երբ միջազգային դիվանագիտության սեղանին դրվեց Հայկական հարցը և Բեռլինի վեհաժողովում կարող էր իրականություն դառնալ Արևմտյան Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերելու հարցը: Այս շրջանում Նուբարը բավական ոգևորված էր և ցանկանում էր օգտագործել ընձեռված պատեհ առիթը և իր դիվանագիտական կարողություններն օգտագործել հայության շահերը պաշտպանելու համար: Բեռլինի կոնֆերանսի նախօրեին, Նուբարը Հայկական պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանին առաջարկեց իր միջամտությունը և բարենորոգումների սեփական նախագիծը: Այդ ծրագրին հավանություն տվեցին նաև երկու նշանավոր հայազգի պետական գործիչներ՝ գեներալ Միքայել Լորիս-Մելիքովը և Լոնդոնում Իրանի դեսպան ու Բեռլինի կոնֆերանսում իրանական պատվիրակության ղեկավար Մելքոն խանը, ինչպես նաև՝ Փարիզում Անգլիայի և Գերմանիայի դեսպանները: Մ. Խրիմյանը համոզված էր, որ պետք է ներկայացնեին Նուբար փաշայի նախագիծը, իսկ վերջինիս հրավիրեին Բեռլին, որպեսզի անձամբ վեհաժողովին ներկայացներ իր ծրագիրը: Սակայն պատրիարքը ոչ միայն մերժեց Նուբարի ծրագիրը, այլև՝ արգելեց նրան հրավիրել Բեռլին:

Կյանքի վերջին տարիները Նուբար փաշան անցկացրեց Փարիզում, ուր և մահացավ 1899 թ. հունվարի 2-ին: Աճյունը փոխադրվեց Եգիպտոս և թաղվեց Ալեքսանդրիայի հայկական եկեղեցու բակում[5]: Նրա մահվան առթիվ

---

[1] Ալպոյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960, էջ 94:

[2] Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Բ, էջ 289: Նաև՝ Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, էջ 96:

[3] «Անահիտ», Փարիզ, 1899, թիւ 4, էջ 145:

[4] Պէրդրան Է., նշվ. աշխ., էջ 79:

[5] Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Գ, էջ 277-294:

ցավակցական հեռագրեր ստացվեցին բազմաթիվ նշանավոր մարդկանցից, այդ թվում՝ Անգլիայի թագուհուց և վարչապետից, Եգիպտոսի խդիվից: Նուբարի մասին հոդվածներ տպագրվեցին եվրոպական գրեթե բոլոր պարբերականներում: Նրա հուղարկավորության օրը կառավարության որոշմամբ Եգիպտոսում ազգային սուգ և ոչ աշխատանքային օր հայտարարվեց: Նույն օրը Լոնդոնի Ս. Պետրոս եկեղեցում ևս հոգեհանգստի արարողություն կատարվեց[1]: Եգիպտոսը չմոռացավ հայ նշանավոր պետական գործչի ներդրումը այդ երկրի բարգավաճման գործում: Կանգնեցրել են նրա արձանները, նրա անունով անվանակոչել են փողոցներ Կահիրեում և Ալեքսանդրիայում, ջրանցքներ, երկաթուղային կայարաններ և պուրակներ Եգիպտոսի տարբեր վայրերում:

Նուբարի դուստրերից **Զիպա-Մարիամը** (1852-1899) 1883 թ. ամուսնացել է Տիգրան փաշա դ'Ապրո Բագրատունու (1846-1904) հետ: Զիպան թաղվել Կահիրեի Ս. Մինաս հայոց գերեզմանատանը՝ Ապրոյան գերդաստանի մատուռ-դամբարանի մեջ: 1885 թ. ծնվեց նրա դուստրը՝ Մարգարիտ-Վարդուհին, որի կնքահայրը դարձավ քեռին՝ Պ. Նուբարը, իսկ 1886 թ.՝ որդին՝ Արամ-Ստեփան դ'Ապրոն: Մարգարիտն ամուսնացավ իտալացի մարկիզ Ռոբերտո Վենտուրի Զինորիի հետ և ունեցավ երեք զավակ, որոնք հաստատվեցին Նեապոլում և Ֆլորենցիայում:

Նուբարի մյուս դուստրը՝ **Նոյեմի-Վարդուհին** (1853-1947) 1876 թ. ամուսնացել է Լևոն բեյ Գափամաճյանի հետ: Նոյեմի Գափամաճյանն աչքի է ընկել իր բարեգործություններով: Նա 41.000 դոլար է տրամադրել ՀԲԸՄ-ին, որով Փարիզի արվարձան Շուազի Լը Ռուայի մեջ բազմաբնակարան շենք կառուցվեց, որը էժան գներով վարձով հատկացվում էր հայ չքավոր ընտանիքներին: Փարիզի Հայ աղքատախնամ ընկերությունը մշտապես վայելում էր նրա աջակցությունը, իսկ ՀԲԸՄ-ի կրթական ձեռնարկների համար հատկացրել է 35.000 դոլար:

Հայոց պատմության մեջ յուրահատուկ տեղ է զբաղեցնում Նուբար փաշայի որդին՝ նշանավոր բարերար, հասարակական-քաղաքական գործիչ **Պողոս Նուբար փաշան** (1851-1930): Նրա անվան հետ է կապված հայկական ամենախոշոր բարեգործական հաստատություններից մեկի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ստեղծումն ու բարգավաճումը, Հայկական հարցի ամենածանր շրջանում՝ 1912-1921 թթ. նա ղեկավարեց Հայ ազգային պատվիրակությունը և մեծ ջանքեր գործադրեց հայանպաստ

[1] Նուպար փաշա ու եւրոպական մամուլը, էջ 140:

լուծումների հասնելու համար: Հավանաբար հայ իրականության մեջ նա միակ գործիչն է, որի ստեղծած բոլոր բարեգործական, կրթական հաստատությունները գործում են նաև հիմնադրի մահվանից հետո՝ մինչև այսօր: Նա տաղանդավոր գյուտարար էր և արժանացել է բազմաթիվ միջազգային մրցանակների:

Պողոս Նուբարը ծնվել է 1851 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում: Փարիզում ճարտարագետ-երկրաչափի որակավորում ստանալուց հետո աշխատել է Ֆրանսիայի հանքերում ու երկաթուղիներում, որպեսզի կատարելագործի գիտելիքներն ու հմտությունները: 1880 թ. վերջնականապես վերադարձել է Եգիպտոս և ձեռնամուխ եղել ֆինանսական, ճարտարագիտական ու երկրագործական խոշոր ձեռնարկներ իրագործելուն և կարճ ժամանակ անց դարձել Եգիպտոսի ամենահարուստ մարդկանցից մեկը: Այնտեղ նա ղեկավարում էր մոտ 20 խոշոր ձեռնարկություններ, որոնց մեծ մասի հիմնադիրն էր: Նրա կազմած նախագծով Նեղոսի վրա կառուցվեցին Կահիրեին ջուր մատակարարող ջրհան կայաններ:

Նա ավելի քան 7 տարի ղեկավարել է Եգիպտոսի երկաթուղիների վարչությունը (1878-1879, 1891-1898): Նրա ջանքերով երկաթուղային համակարգը մեծ զարգացում ապրեց: Սակայն, չհանդուրժելով անգլիացիների անհարկի միջամտություններն այդ բնագավառում, հրաժարական տվեց: Հայ գործիչը ամեն կերպ փորձում էր պաշտպանել իրեն հյուրընկալած երկրի ազգային շահերը: Հետագայում նրան բազմիցս առաջարկեցին նախարարական պաշտոններ, սակայն հայազգի գործիչը չընդունեց[1]:

Պ. Նուբարը և բելգիացի միլիոնատեր Անբենը, որը Փարիզի մետրոյի հիմնադիրներից էր, Կահիրեի հյուսիս-արևելքում կառուցեցին Հելիոպոլիս թաղամասը: Այն մինչև այժմ էլ Եգիպտոսի մայրաքաղաքի լավագույն թաղամասն է համարվում:

Խոշոր ներդրում է ունեցել Եգիպտոսի երկրագործության զարգացման գործում: Նա Եվրոպայից ճանաչված երկրագործներ ու քիմիկոսներ էր բերում տեղում փորձեր կատարելու համար: Նա առաջինն էր, որ անմշակ ու աղային հողեր գնեց, դրանք նորագույն մեթոդներով մշակելի դարձրեց և շահավետ գներով վաճառեց: Նրա ագարակները լավագույնն էին համարվում ամբողջ երկրում, իսկ դրանց արտադրանքն ամեն տարի մրցանակների էր արժանանում Կահիրեի հողագործական ցուցահանդեսում:

[1] Ալպոյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը, Գահիրէ, 1960, էջ 167:

1898 թ. հիմնադրվեց Եգիպտոսի Արքայական երկրագործական ընկերությունը՝ իշխան Հուսեինի նախագահությամբ, իսկ Պ. Նուբարը փոխնախագահն էր և, փաստորեն, ընկերության իրական ղեկավարը: Նա մեծ ներդրում ունեցավ ընկերության բարգավաճման և առաջին երկրագործական ցուցահանդեսների կազմակերպման գործում:[1] 1905 և 1906 թթ. որպես եգիպտական կառավարության ներկայացուցիչ մասնակցեց Երկրագործական միջազգային առաջին խորհրդաժողովին, որը գումարվեց Հռոմում՝ Իտալիայի թագավորի նախագահությամբ:[2] Նա նշանակալի դեր կատարեց այդ խորհրդաժողովում, չնայած փոքր երկրի ներկայացուցիչ էր:[3]

Պ. Նուբարը ստեղծել է նոր տիպի տրակտոր, որը 1900 թ. ցուցադրվեց Փարիզի ցուցահանդեսում: Այդ գյուտի համար նա ստացավ ոսկե առաջին մեծ մեդալը և Պատվո լեգեոնի ասպետության խաչ: Հաջորդ տարի այն կատարելագործեց և 1906 թ. Միլանի ցուցահանդեսում ևս մեծ հաջողություն ունեցավ՝ ստացավ ոսկե մեծ մեդալը և Պատվո լեգեոնի սպայության աստիճան, ինչպես նաև՝ Ֆրանսիայի Երկրագործական ընկերության ոսկե մեդալը, որը չորս տարին մեկ շնորհվում էր երկրագործական լավագույն գյուտարարին:

1914 թ. Եգիպտոսի կառավարությունը քննարկեց անգլիացի մասնագետների պատրաստած Սուդանի ջրաբաշխական ծրագրի երկու նախագիծ: Կառավարությունը դիմեց Պ. Նուբարի աջակցությանը, որպեսզի նա որպես հմուտ ճարտարագետ ընտրի դրանցից լավագույնը: Սակայն նա կազմեց իր տարբերակը, որը հավանության արժանացավ և նույնությամբ գործադրվեց:[4]

Պ. Նուբարը երկար տարիներ ղեկավարել է եգիպտահայ համայնքի ներքին կյանքը և նպաստեց համայնքի զարգացմանը: Նրա մոտ բարձր էր ազգային արժանապատվության զգացումը: Նրա հրամանով հայերին արգելվում էր Եգիպտոսում և Սուդանում կոշիկ մաքրելն ու ներկելը:[5] Նրա ատենապետության օրոք առաջնորդարանի նախկինում կուտակված պարտքերը վճարվեցին, իսկ հասույթներն՝ ավելացան: 1895-1896 թթ. համիդյան ջարդերից հետո, երբ Եգիպտոսում ապաստանեցին հազարավոր հայ գաղթականներ, նա ղեկավարեց Ալեքսանդրիայի նպաստամատույց հանձնաժողովը և բազմաթիվ հայերի փրկեց

[1] Անդ, էջ 174:
[2] «Լուսաբեր», 1905, թիւ 63:
[3] Անդ, թիւ 104:
[4] «Միութիւն», 1930, թիւ 141, էջ 332:
[5] Դավթյան Ռ., Բարերարը, «Խորհրդային Հայաստան», Երևան, 1990, թիվ 94:

թշվառությունից ու սովից, բազմաթիվ գաղթականների ապահովեց աշխատանքով:[1]

Պ. Նուբարը դեռևս երիտասարդ տարիքից միշտ աչքի է ընկել բարեգործական հակումներով: Եգիպտոսում գործող հայկական որբանոցների բյուջեների մի խոշոր մասը գոյանում էր նրա նվիրատվություններից, նյութապես աջակցում էր նաև եգիպտահայ մամուլի զարգացմանը: Եգիպտոսում կատարվող բոլոր հանգանակությունների ցուցակները գլխավորում էր նրա անունը: Մեծապես աջակցում էր Էջմիածնի Մայր Աթոռին, Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարաններին:

Շուտով, բարերարը համոզվեց, որ մասնակի հանգանակություններ կատարելով կամ անհատական օգնությամբ անհնար է վերացնել այն անհուն թշվառությունը, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը XX դարասկզբին: Նա մտահղացավ ստեղծել համահայկական բարեգործական մի ընկերություն, որը ժամանակին օգնության կհասներ աղետների դեպքում, կնպաստեր հայության նյութական ու տնտեսական վիճակի բարելավմանը, մտավոր ու բարոյական զարգացմանը: Նա ստեղծեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որը հիմնադրման օրվանից մինչև այժմ ամենախոշոր հայկական բարեգործական հաստատությունն է:

1912-1921 թթ. ղեկավարել է Հայ ազգային պատվիրակությունը: Այդ ընթացքում նա ցույց տվեց դիվանագիտական բավական բարձր ունակություններ: 1914թ. հունվարի 26-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված հայկական բարենորոգումների մասին համաձայնագիրն իրականություն դարձավ նրա դիվանագիտական ճիշտ քայլերի շնորհիվ:

Հայ ժողովրդին պատուհասած մեծ աղետից ու Հայկական հարցի ձախողումից ընկճված և ուժասպառ, Պ. Նուբարը 1921 թ. հեռացավ ոչ միայն Ազգային պատվիրակության նախագահի պաշտոնից, այլև թողեց բոլոր անձնական գործերը և ամբողջ եռանդը նվիրեց ՀԲԸՄ հզորացմանը, որի մասնաճյուղերը տարածվեցին հայկական բոլոր համայնքներում և մեծ դեր խաղացին սփյուռքահայության կրթական ու մշակութային առաջընթացի գործում, այն մեծ աջակցություն ցուցաբերեց Խորհրդային Հայաստանի վերաշինությանը և ներգաղթի կազմակերպմանը:

Նա մեծ ուշադրություն էր դարձնում կրթության զարգացմանը: Կառուցել է Կահիրեի Գալուստյան վարժարանի նոր շենքը (1907 թ.), Հելիոպոլսի Նուբարյան

[1] Յուշամատեան Պօղոս Նուպար փաշայի, Լոս Անճելըս, 1986, էջ 20:

ազգային վարժարանը (1924 թ.): 1906 թ. ուսանողական հիմնադրամ ստեղծեց, որի կրթաթոշակով մի քանի հայ ուսանողներ սովորեցին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Եգիպտոսի բարձրագույն հաստատություններում: 1924 թ. ուսանողական այդ հիմնադրամը Կահիրեից տեղափոխեց Բրյուսել, ուր ստեղծեց Հայ ուսանողական Նուբարյան հիմնարկությունը: 1930 թ. ստեղծել է Փարիզի Հայ ուսանողական կենտրոնը, որը կնոջ պատվին կոչեց Մարի Նուբար ուսանողական տուն:

Ազգային բարերարը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հայոց լեզվի և հայագիտության զարգացմանը: Իր նվիրատվությունների զգալի մասը նա հատկացրեց այդ բնագավառին: Նրա հովանավորությամբ բազմաթիվ հայերեն և օտարալեզու հայագիտական աշխատություններ են լույս տեսել, բազմաթիվ հայագետների կամ հայասերների հատկացրել է նյութական օժանդակություն: Պ. Նուբարը 1924 թ. Օքսֆորդի համալսարանում հիմնել է Հայագիտական ամբիոն՝ Հայոց պատմության և գրականության ուսումնասիրության համար[1]: Հայագիտությանը նվիրված խոշոր ձեռնարկներից էր Փարիզում Նուբարյան մատենադարանի բացումը: Միաժամանակ այդ հաստատությանը հիմնադրամ հատկացրեց, որի եկամուտներով պետք է գնեին կամ հրատարակեին Հայաստանին, հայերին և Մերձավոր Արևելքին նվիրված գրքեր[2]:

Չնայած համոզմունքներով Պ. Նուբարը դեմ էր խորհրդային վարչակարգին ու տնտեսաձևին, այնուամենայնիվ, չզլացավ օգնություն ցուցաբերել Խորհրդային Հայաստանին, քանի որ գիտակցում էր, որ վարչակարգերն անցողիկ են, իսկ հայրենիքը՝ մնայուն: 1923 թ. նոյեմբերին Հայաստանի գյուղատնտեսության ֆոնդին փոխանցեց 1.000 ոսկի՝ հողաշինարարական աշխատանքներ կատարելու նպատակով[3]: Միաժամանակ նրա նախաձեռնությամբ ՀԽՍՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսվեցին հայ որբերին հայրենիք տեղափոխելու համար: Արդեն 1924 թ. Երուսաղեմի, Հալեպի և Բեյրութի որբանոցների 250 սաներ ժամանեցին Երևան: Տեղափոխության բոլոր ծախսերը հանձն առավ ՀԲԸՄ-ը, իսկ յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությանը տվեց 100 դոլար՝ հոգալու նրանց մեկ տարվա ծախսերը: Բացի այդ, ՀԲԸՄ-ը որբերին տրամադրեց որոշակի գումար՝ սեփական գործ սկսելու

[1] Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, հ. Ա, Գահիրէ, 1943, էջ 246:
[2] «Միութիւն», Փարիզ, 1929, թիւ 132:
[3] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 150, թ. 60:

համար՝ ըստ իրենց սովորած մասնագիտության: Պ. Նուբարի նախաձեռնությամբ ՀԲԸՄ-ը հոգաց նաև 1925-1927 թթ. ներգաղթի ծախսերը, որոնց զգալի մասն անձամբ բարերարի գումարներով:

Պ. Նուբարը արձագանքեց նաև ՀԽՍՀ-ին աջակցելու Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) 1924 թ. կոչին և հանդես եկավ սփյուռքահայությանն ուղղված շրջաբերականով, որպեսզի նրանք իրենց ներդրումը բերեն Հայաստանի օգնության հանգանակությանը[1]: 1924 թ. ամռանը միայն Փարիզում արդեն հանգանակվեց 142.930 ֆրանկ, որից 50.000 ֆրանկը Պ. Նուբարի նվիրատվությունն էր, իսկ 20.000-ական ֆրանկ նվիրեցին նրա քույրն ու որդին:

Պ. Նուբարի օգնությունը չուշացավ 1926 թ. Լենինականի երկրաշարժից տուժածներին: Աղետյալներին օգնելու համար նա կատարեց 40.000 դոլարի նվիրատվություն: Հազիվ էին երկրաշարժի ցավերը դարմանվել, երբ բարերարին ցնցեց Երևանի ջրհեղեղի չարաղետ լուրը: Նա և Գալուստ Կյուլպենկյանը 100.000 դոլար ուղարկեցին տուժածներին օգնելու համար[2]:

Պ. Նուբարը գիտակցում էր, որ Հայաստանի վերաշինության ու զարգացման համար անհրաժեշտ են որակյալ մասնագետներ: 1924 թ. նա տեղեկացրեց ՀԽՍՀ կառավարությանը, որ 12.500 ոսկի ռուբլի է հատկացնում ՀԲԸՄ-ին՝ Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանողներին կրթաթոշակ և Եվրոպայում ուսումը շարունակելու հնարավորություն տալու համար: Եվրոպայում ուսանողը պետք է համարվեր նաև Բրյուսելի ուսանողական հիմնարկության թոշակառու[3]: Սակայն, ցավոք սրտի, առաջին երկու տարիներին ուղարկված գումարները ոչ ամբողջությամբ ծառայեցին իրենց նպատակին, իսկ հետագա տարիներին մրցանակակիրների անուններ չներկայացվեցին և Նուբարյան մրցանակային հիմնադրամի գումարները երկար ժամանակ չօգտագործվելուց հետո, ի վերջո, հանձնվեցին Բրյուսելի ուսանողական հաստատությանը:

1930 թ. բարերարի ջանքերով Երևանում բացվեց Մարի Նուբար ակնաբուժարանը: Այդ հաստատությանը կարևոր դեր էր հատկացված Հայաստանի բժշկական հաստատությունների համակարգում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այդ տարիներին հանրապետությունում լայնորեն տարածված

---

[1] Շրջաբերական Վսեմ. Պողոս Նուպար փաշայի Հայաստանի օգնութեան հանգանակութեան մասին, «Միութիւն», Գահիրէ, 1924, թիւ 98, էջ 23:

[2] Դավթյան Ռ., Բարերարը, «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան,1990, թիվ 94:

[3] ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 1745, թ.15-16:

էին աչքի վարակիչ հիվանդությունները, իսկ մասնագիտացված հիվանդանոց չկար: 1930 թ. հունվարին նա Հայաստանին 12.000 ֆրանկ արժողությամբ վիրաբուժական գործիքներ նվիրեց:

Պ. Նուբարի հատկացրած գումարներով 1930 թ. ամռանը, ակադեմիկոս Ա. Թամանյանի նախագծով, Երևանից 7կմ հարավ-արևելք, սկսվեց Նուբարաշեն ավանի շինարարությունը: 1938 թ. ավանը անվանափոխվեց Սովետաշենի, և միայն 1989թ. դեկտեմբերի 3-ին այն կրկին վերստացավ իր հիմնադրի անունը[1]:

Պ. Նուբարը կատարել է նաև բազմաթիվ այլ նվիրատվություններ, որոնք ամբողջությամբ ի մի բերել պարզապես անհնար է: Նույնիսկ մահվան մահճում բարերարը չէր դադարում մտածել իր ժողովրդի մասին: Իր կտակում նա 50.000-ական ֆրանկ նվիրեց Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցուն, Փարիզի Հայ Աղքատախնամին և Տիկնանց Միությանը, Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ աղքատախնամ ընկերություններին[2]: Ազգային մեծ բարերարը իր մահկանացուն կնքեց 1930 թ. հունիսի 25-ին, Փարիզի իր բնակարանում՝ 79 տարեկան հասակում: Թաղված է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը՝ Նուբարյան դամբարանում:

Պ. Նուբարի ավագ որդին էր **Առաքել-Ոսկան փաշա Նուբարը** (Ալեքսանդրիա, 1881-1954, Քարշ): Կրթությունը ստացել է Անգլիայում և Ֆրանսիայում: ՀԲԸՄ հիմնադիր և գործուն անդամներից էր: 1904 թ. ամուսնացել է Նազենի Գևորգի Ասլանյանի (1887-1974) հետ: Առաքել Նուբարը 1936 թ. Եգիպտոսի թագավորից ստացավ փաշայի տիտղոս: Առաքելն ու Նազենին կյանքի վերջին տարիներն անցկացրին Փարիզի մոտ գտնվող Քարշ քաղաքում, ուր և մահացան: Նրանք թաղված են Պեր Լաշեզում գտնվող Նուբարյանների տոհմական դամբարանում:

Պ. Նուբարի դուստրը՝ **Եվա-Զարուհի Նուբարը** (1883-1973) 1907 թ. ամուսնացել է բելգիացի կոմս Գիյոմ դ'Արսքոթ Շանհովենի հետ: Վերջինս Կ. Պոլսի բելգիական դեսպանատան ավագ քարտուղարն էր (1905-1910 թթ.), ապա՝ Բելգիայի Ալբերտ թագավորի դիվանապետը: Նրանց զավակներն էին *Ֆիլիպը* (ծն. 1908), որը 1935 թ. ամուսնացավ Ռուբի դե Մյունուի հետ, *Աննան* (ծն. 1910), որը 1938 թ. ամուսնացավ կոմս Ֆրանսուա դ'Աերստեդի հետ, *Ժիզլենը* (ծն. 1912), որը 1934 թ. ամուսնացավ իշխան Ֆրանսուա Ժոզեֆ դե Վինդիշ-Գրացի հետ,

[1] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 35-36:

[2] «Միութիւն», Փարիզ,1930, թիւ 141, էջ 352:

Մարգարիտը (1916-1942), որը 1937թ. ամուսնացավ կոմս Դիդիե դ'Ասպրեմոն-Լինդեն-Մայլենի հետ:

Պ. Նուբարի երրորդ զավակն էր **Զարեհ-Տիգրան բեյ Նուբարը** (Ալեքսանդրիա, 1884-1963, Ժնև): Փարիզում ստացել է փիլիսոփայական կրթություն, մի շարք գրքերի հեղինակ է: 1921 թ. ամուսնացել է Երանուհի Յալտզճյանի (1900-1944) հետ: Զարեհը երկար տարիներ ՀԲԸՄ վարչության անդամ էր, կատարել է բազմաթիվ բարեգործություններ. 1.000 ոսկի է հատկացրել Նուբարաշենի կառուցմանը, 29.000 ֆրանկ՝ ներգաղթի ֆոնդին, 5.000 անգլիական ոսկի՝ Երևանում «Բարեգործականի տան» կառուցմանը, 1956 թ. 25.000 ֆունտ ստերլիգով հիմնադրամ ստեղծեց, որի հասույթները հատկացվելու էին հայ գիտնականներին և արվեստագետներին, միշտ օժանդակում էր հայ ուսանողներին: 1956 թ. հաստատվել է Ժնևում և 50.000 շվեյցարական ֆրանկ հատկացրել տեղում հայկական եկեղեցի կառուցելու համար: Թաղված է Ժնևի Սեն Ժորժ գերեզմանատանը: Զարեհ Նուբարն ուներ երկու դուստր. *Մարիան* (ծն. 1923), որը 1949 թ. ամուսնացավ իշխան Պիեռ Վոլկոնսիի հետ և *Նոյեմին* (ծն. 1924), որը 1951 թ. ամուսնացավ կոմս Ինիգո դ'Օպերսդորֆի հետ:

Պ. Նուբարի մյուս որդին էր **Վահրամ բեյ Նուբարը** (Ալեքսանդրիա, 1886-1957, Փարիզ): Միջնակարգ կրթությունը ստացել է Անգլիայի Էստբորն քաղաքի գիշերօթիկ դպրոցում, ապա՝ Ժնևում, բարձրագույնը՝ Լոզանի դաշնային բարձրագույն պոլիտեխնիկական դպրոցում, ուր ձեռք է բերել ճարտարագետի որակավորում: 1922 թ. նա ամուսնացել է Ռոզիտա Մորիի հետ և հաստատվել Փարիզում: Վահրամ բեյը եղել է ՀԲԸՄ Կենտրոնական վարչության պատվակալ նախագահը, 100.000 դոլար է հատկացրել ՀԲԸՄ-ին, որի եկամուտները որպես մրցանակ ամեն տարի հատկացվելու էին գրական և գիտական ուսումնասիրությունների համար: Գրել է սոցիալական, տնտեսական և հատկապես միջազգային խաղաղության հարցերին նվիրված մի շարք աշխատություններ: Թաղված է Փարիզի Նուբարյան դամբարանում: Վահրամ Նուբարն ուներ երեք դուստր՝ *Ինձին* (ծն. 1923), որը 1950 թ. ամուսնացել է Միշել Շիպովի հետ, *Պաուլա-Նվարդը* (ծն. 1925), որը 1946 թ. ամուսնացել է Արա Չամքերթյանի հետ և *Մարի-Աստղիկը* (ծն. 1935): Նվարդի դուստրը՝ Ինգրիդը (ծն. 1947), 1974 թ. ամուսնացել է Զավեն Եկավյանի հետ, որը երկար տարիներ «Գալուստ Գյուլպենկյան հիմնարկության» հայկական բաժնի տնօրենն էր:

Պ. Նուբարի կրտսեր որդին էր **Ասլան-Կարապետ Նուբարը** (1888-1904): Ծնվել է Ալեքսանդրիայում: Միջնակարգ կրթություն ստացել է Փարիզում, ապա՝

Լոզանում: Վախճանվել է պատանի տարիքում՝ 1904 թ. հոկտեմբերի 21-ին: Աճյունը հողին է հանձնվել Փարիզի Նուբարյան դամբարանում:

Այսպիսով, պետք է արձանագրենք, որ Սյունիքից սերող Նուբարյան գերդաստանի ներկայացուցիչները, հաստատվելով Զմյուռնիայում, ապա՝ Եգիպտոսում ու եվրոպական երկրներում, աչքի ընկան գործարար աշխարհում, պետական կառավարման համակարգում, գրական, հասարակական, բարեգործական ասպարեզներում: Այս տոհմի ներկայացուցիչները ամենուրեք բարձր են պահել հայի անունը և հպարտացել են իրենց ծագմամբ: Ցավոք սրտի, ինչպես վերևում տեսանք, ազգային նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշայի սերունդները խառն ամուսնությունների հետևանքով հետզհետե հեռացել են հայ իրականությունից, և, պետք է տխրությամբ արձանագրենք, որ ուծացման այդ վտանգը լուրջ և չափազանց մեծ սպառնալիք է ամբողջ հայկական Սփյուռքի համար:

Ամփոփում

Նուբարյան գերդաստանը սերում էր Սյունիքի մելիքներից և ամենանշանավոր հայկական տոհմերից էր: Նրա ներկայացուցիչները եղել են ճանաչված ռազմական, պետական գործիչներ, դիվանագետներ, մտավորականներ, բարեգործներ, հաջողակ առևտրականներ: Այս տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչներն էին Նուբար փաշան և նրա որդին Պողոս Նուբար փաշան: Ավաղ, Նուբարյան տոհմի անդամները խառնամուսնությունների հետևանքով այժմ հեռացել են հայկական արմատներից:

The Nubaryan Family

S. Poghosyan

Summary

Key words *- Nubaryan family, the Meliks of Syunik, Nubar, Boghos Nubar, Araqel Nubar, Mesrop Nubaryan.*

The Nubaryans originate from Syunik meliks and were one of the most prominent Armenian families. Its representatives have been recognized as a prominent military,

politicians, diplomats, intellectuals, philanthropes, and successful traders. The most famous members of this dynasty were Nubar Pasha and his son - Boghos Nubar Pasha. Alas, the members of Nubaryan family as a result of mixed marriages are now moved away from the Armenian roots.

Семейство Нубарян

С. Погосян

Резюме

Ключевые слова *- Нубарян семейство, Сюникские мелики, Нубар, Погос Нубар, Аракел Нубар, Месроп Нубарян.*

Нубаряны происходят от Сюникских меликов и были одним из самых выдающихся армянских семей. Его представители были признаны в качестве выдающихся военных, политиков, дипломатов, интеллектуалов, благотворителей, успешных торговцев. Наиболее знаменитые представители этой династии были Нубар Паша и его сына - Погос Нубар Паша. Увы, члены семьи Нубарян в результате смешанных браков в настоящее время отошли от Армянских корней.